

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

ՉՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈՑՅԱՆ

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան լեռնազանգվածը, այն է՝ հետագայի Մեծ Հայքի տասնհինգ վարչական բաժանումներից վեցը՝ Այրարատ, Տայք, Գուգարք, Ուտիք, Արցախ և Սյունիք նահանգները, որ Մինուայի (810—786 թթ. մ. թ. ա.), Արգիշթե I-ի (786—764 թթ. մ. թ. ա.), Սարգուրե II-ի (764—735 թթ. մ. թ. ա.), Ռուսա I-ի (735—714 թթ. մ. թ. ա.) և Արգիշթե II-ի (714—685 թթ. մ. թ. ա.) օրոք միավորվել էին հինարևելյան Ուրարտու պետության մեջ, 1801—1878 թթ. ընթացքում, հիմնականում ռուսպարսկական (1826—1828 թթ.) և ռուս-թուրքական (1877—1878 թթ.) պատերազմների հետևանքով անցան Ռուսաստանի տիրապետության տակ:

Մեծ Հայքի հիշյալ նահանգների՝ Ռուսաստանի գերիշխանության տակ անցած տարածքը որոշակի պատճառներով կոչվեց Ռուսական Հայաստան (բնակիչները՝ ռուսահայեր), կամ նույնքան որոշակի պատճառներով՝ Արեւելյան Հայաստան (բնակիչները՝ արևելահայեր):

Ուրարտական սեպագիր արձանագրություններն ու ժայռափոր տարեգրությունները, որոնք հազարամյակների միջով մեզ են հասցրել ինչպես բուն ուրարտական, այնպես էլ հայկական սկզբնավորվող պատմության դրվագները, ի թիվս այլ կարևոր տեղեկությունների պարունակում են նաև Արևելյան Հայաստանի տարածքում հանդիպող տեղանունների մի պատկանելի քանակ, որի մի մասը եթե ժամանակի ընթացքում մոռացվել է, ապա մյուս մասը հարատևել է մինչև մեր օրերը: Դրանցից են հիմնականում երկրանուններն ու քաղաքանունները, որոնք ուրարտա-հայկական հնչյունական օրինաչափ ձևափոխություններից բացի կրել են նաև այլ բնույթի փոփոխություններ, տալով հետևյալ անցումները. երկրանունից (ցեղանունից)՝ նահանգանուն, գավառանուն, քաղաքանուն, գյուղանուն, գետանուն, ինչպես նաև քաղաքանունից՝ քաղաքանուն, գյուղանուն, լճանուն, գետանուն:

I. Երկրանունից (ցեղանունից)՝ նահանգանուն—1. Դեյալեփե (Տայֆ): Առաջին անգամ հիշատակվում է Մինուայի ժայռափոր արձանագրություններից մեկում¹, որ գտնվել է Կարինի մոտակա Զիվին գյուղում, իսկ այնուհետև Արգիշթե I-ի խորխոռյան տարեգրության մեջ² և նրա վրկնօրինակում³:

¹ F. E. Schulz, Memoires sur le lac de Van et ses environs („Journal Asiatique“, IX, Paris, 1840) (այսուհետև՝ MLV), XLII: Հմմտ. Դ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960: Առաջին հրատարակությունը՝ „Вестник древней истории“, 1953, № 2, 3, 4, 1954, № 1, նաև՝ 1971, № 3, 4 (այսուհետև՝ УКН), № 36, տող 13 և այլուր: F. W. König, Handbuch der Chaldäischen Inschriften, Graz, 1955—1957 (այսուհետև՝ HChI), № 23, IV:

² MLV, II (Հմմտ. ՄԿН, № 127, I, տող 6 և այլուր. HChI, № 80, § 1, IV):

³ C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldicarum, I—II, Berlin und Leipzig, 1926—1935 (այսուհետև՝ ClCh), XXVI (Հմմտ. УКН, № 128, A1, տող 13 և այլուր. HChI, № 81, Rs, III):

Սույն *!Tejauehe* ձևից եթե հանենք *-ehe* ածանցը, ապա կստանանք **Teja-* (**Sbjw-*) ձևը, որի վրա եթե գումարենք հայերենի տեղանվանականերտ-*f* հոգնակիության ցուցիչը, կստանանք **Sbjwaf*: Նկատի ունենալով ուրարտա-հայկական անցումների *b > w* հնչյունափոխությունը⁴, ապա հիշյալ ձևից կստանանք **Swajwaf*, իսկ նախագրաբարյան *w > n* հնչյունափոխության պայմաններում՝ **Swajnf*:

Հայտնի է, որ հնում հայերենի ուղղական և սեռական հոլովները կազմվել են շեշտով: Շեշտը բառի նախավերջին վանկի ձայնավորի վրա դրվելիս ստացվել է տողղական հոլով՝ **Swajnf*, որի պատճառով շեշտազուրկ *n*-ն ընկել է և առվել **Swajf* ձևը, որը վկայված է⁵, և հակառակը՝ սեռական հոլովը կազմվել է շեշտը բառի նախավերջին վանկի ձայնավորի վրայից վերջին վանկի կորած ձայնավորի տեղը տեղափոխելով, ուստի, սղված ձայնավորի վերականգնման և հայցական հոլովի հոգնակիության ցուցիչի առկայության պայմաններում ստացվել է *Swajnf* ձևը, որը նույնպես վկայված է⁷: Հետևաբար, *!Tejauehe > Swajf* անցումը կարելի է դիտել միանգամայն հնարավոր և օրինալարի⁸:

2. *KURUrtehe* (*Արձախ > Արցախ*): Հիշատակվում է միայն Սարգուրե II-ի մոտ, Սևանա լճի հարավային ափին, Մովակ գյուղում գտնված արձանագրության մեջ⁹, *KURUrtehe > Արցախ* զուգահեռը, առանց լեզվական քննության, առաջին անգամ առաջարկել է Գ. Ղափանցյանը¹⁰:

Սույն *KURUrtehe* երկրանվան մեջ *u*-ն, հավանաբար, հնչել է *o*, այսինքն՝ **Ortehe*, քանի որ հայերենին հատուկ է ոչ թե *u > a* (*ու > ա*), այլ *o > a* (*ո > ա*) հնչյունափոխություն¹¹, որը սպասելի է նաև տվյալ դեպքում: Սակայն, ուրարտա-հայկական անցումներում *t > d* (*ց*) հնչյունափոխություն հայտնի չէ, ուստի, կարելի է եզրակացնել, որ, հավանաբար, գոյություն է ունեցել նախնական **Orqehē* ձևը: Վերջինս՝ նեթարկվելով հունատիպ ինչ-որ մի անհայտ լեզվի հնչյունական օրենքներին, *u > i* անցումով՝ հնդեվր. **k^u* > հուն. *t* (*τ*), հատկապես *e* (*ε*)-ից առաջ¹², ինչպես որ քննվող տեղանվան մեջ է. տվել է **Ortehe*, որը և վկայված է ուրարտական աղբյուրներում *KURUrtehe* ձևով: Սակայն, հայերենին հասել է ոչ թե **Ortehe*, այլ **Orqehē* ձևից առաջացած **Orgehe* տարբերակը, որից *o > w*, *e > w* անցումներով (ինչպես ասվեց վերևում) *g > d* հնչյունափոխությամբ և վերջին կիսաձայն

⁴ О. О. Карагезян, Локализация урартского царского города Арцашкы (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 5) (այսուհետև՝ ЛУЦГА), էջ 69—73:

⁵ Հ. Հ. Կարապետյան, Սեպագիր աղբյուրների Դայանեու երկիրը (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 6) (այսուհետև՝ ՍԱԴԵ), էջ 71—72:

⁶ Մ. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963 (այսուհետև՝ ՀԸԱ), էջ 106, 110:

⁷ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 108, 313:

⁸ ՍԱԴԵ, էջ 71—74:

⁹ М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», V, М., 1896) (այսուհետև՝ КНЗ), XV (հմտ. УКН, № 161, տող 5, HChI, № 105, 11).

¹⁰ Գ. А. Капанцян, Chetto-Armeniasa, Ереван, 1931, էջ 104:

¹¹ Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (Հին շրջան), Երևան, 1961, էջ 141:

¹² П. Шантрэн, Историческая морфология греческого языка, М., 1953, էջ 280:

e-ի անկմամբ ստացվել է Արձախ, որը վկայված է¹³, իսկ հետագայում ձ>ց հնչյունափոխությամբ՝ Արցախ, որը նույնպես վկայված է¹⁴:

Հետևաբար, մի կողմից ունենք *Orqehe>*Ortehe (վկայված՝ KURU-
tehe), մյուս կողմից՝ *Orqehe>*Orqehe>Արձախ>Արցախ:

3. IUtteruhe կամ KURUitteruhe (Գուգարք): Առաջին անգամ հիշատակ-
վում է Մինուայի կողմից¹⁵, իսկ այնուհետև՝ Արգիշթե I-ի¹⁶ և Սարգուրե II-ի¹⁷:

Ենթադրվում է, որ IUtteruhe կամ KURUitteruhe երկրի տարածքը մոտա-
վորապես համընկնում է հետագայի Գուգարքի տարածքին¹⁸: Հիմնականում
հենց այս հանգամանքը, ինչպես նաև ուրարտա-հայկական հնչյունական զու-
ղահեռները մեղ հնարավորություն են տալիս այդ տեղանունները նույնացնել:

Հայտնի է, որ մի շարք հնդեվրոպական լեզուներում, այդ թվում նաև
հայերենում, գոյություն ունի w>g (վ>գ կամ լ>գ) հնչյունափոխություն:
Այդ երևույթը տարածվում է նաև ուրարտերենից հայերենին անցած տեղա-
նունների վրա: Օրինակ, ուրարտ. KURUelekuhe¹⁹ (տարբերակ՝ KURUele-
kune)²⁰> հայ. Գեղաբունի²¹ (տարբերակ՝ Գեղարբունի)²² (ըստ Գ. Ղափանցյա-
նի)²³, Հետևաբար, միևնույն հնչյունափոխական երևույթը՝ ւ>g (գ), կա-
րող էր տեղի ունենալ նաև IUtteruhe կամ KURUitteruhe ցեղանվան (տեղան-
վան) մեջ:

Այնուհետև, կարելի է ենթադրել, որ ւ (ի) հնչյունը բաց (երբեմն նաև
փակ) վանկի դեպքում կարող էր տալ u (ու), թերևս նաև՝ o (ո): Օրինակ,
աքադ. titu> հայ. թուփ (ըստ Ն. Ադոնցի)²⁴, աքադ. tinuru> հայ. թոնի
(ըստ Հ. Աճառյանի)²⁵: Միևնույն երևույթը նկատելի է նաև ուրարտերենից
կատարված ասուրական փոխառություններում, հենց ուրարտերենում, ուրար-
տերենից հայերենին անցած հատուկ անուններում, ինչպես նաև բուն

¹³ ՀՀԱ. էջ 109, «Եղիշ էի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957,
էջ 125, 127, «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ս տ ե փ ա ն ն ո ս ի Օ Ր Բ Է Լ Ե ա ն
արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910 (կազմի վրա՝ 1911), էջ 69, 189, 485, 489:

¹⁴ Եղիշե, էջ 94, ՀՀԱ, էջ 106, 109, «Մ ո վ ս ե ս ի Կ ա դ ա ն կ ա տ ու ա ց լ ո յ Պ ա տ-
մ ո թ ի ն Ա ղ ու ա ն ի ց ա շ խ ա ր հ ի», Թիֆլիս, 1912, էջ 135 և այլուր, Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի,
Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 358 և այլ հեղինակների մոտ:

¹⁵ CICH, IV (հմմտ. УКН, № 20, лс, տող 13 և այլուր, HChI, № 6, V և այլուր):

¹⁶ MLV, II (հմմտ. УКН, № 127, i, տող 12 և այլուր, HChI, № 80, § 1, VI և այլուր):

¹⁷ Н. Я. Марр, И. А. Орбели, Археологическая экспедиция 1916 года в Ван, Петроград, 1922 (այսուհետև՝ АЭВ), XII, CICH, XXXV (հմմտ. УКН, № 155, D, տող 18, 29 = HChI, № 103, § 11, IV):

¹⁸ Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959 (այսուհետև՝ ИДГ), էջ 113, 210, 223 և քարտեզ էջ 504-ից հետո:

¹⁹ АЭВ, XIII, CICH, XXXVI (հմմտ. УКН, № 155, F, տող 30 և այլուր, HChI, № 103, § 15, XI և այլուր):

²⁰ АЭВ, XIII, CICH, XXXVI (հմմտ. УКН, № 155, F, տող 17, HChI, № 103, § 15, X):

²¹ ՀՀԱ, էջ 109:

²² Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 41, 120 և այլ պատմիչների մոտ:

²³ Г. А. Капанцян, Халдская надпись Русы I из Келакрана, Ереван, 1931, էջ 9, Ս. Գ. Բ ա Ր խ ու դ ա Ր յ ա ն, Վեիքուխի երկիրը (սելուքբեր հին Հայաստանի պատմու-
թյան, I, Երևան, 1935, էջ 200):

²⁴ Ն. Գ. Ա դ ո ն ց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 385—386:

²⁵ Հ. Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, I, Երևան, 1940, էջ 196:

հայերենում: Օրինակ, ուրարտ. KURUliba²⁶ (որը հիշվում է նաև ասուրերենում որպես KURUliba)²⁷ > ասուր. KURUliba (վկայվում է ասուրերենի գրության առանձնահատկություններին համապատասխան, որպես KURUliba)²⁸, ուրարտ. Išpaine²⁹ > ասուր. Išpina³⁰, ուրարտ. KURišqigulu³¹ > ուրարտ. Išqugulhe³², ուրարտ. URUSasine³³ > հայ. Սասուն³⁴ (մեր հեթադրությամբ), ուրարտ. IMiša (վկայված է սեռական հոլովով՝ IMi-ša-i)³⁵ > հայ. Մուշե (հիշվում է ինչպես I գ. դեպքերի կապակցությամբ³⁶, այնպես էլ ավելի ուշ՝ V գ.³⁷), որտեղ առկա բառավերջի a > է անցումը նկատելի է նաև այլ դեպքերում և վկայված է բազմաթիվ օրինակներով³⁸, ինչպես, հայ. Իսկուճի > հայ. Ուսկուճի (ըստ Հ. Աճառյանի)³⁹, նաև՝ գինդ (ոսկեգինդ) > գունդ (հողազունդ), կիթ (հավկիթ) > կուր (այգեկուր) և այլն: Հետևաբար, նման հնչյունափոխական երևույթ՝ i > u (ու), կարող էր տեղի ունենալ նաև Uiteruhe կամ KURUiteruhe ցեղանվան (տեղանվան) մեջ:

Վերևում KURUteruhe երկրի կապակցությամբ նշեցինք, որ նրա հնագույն ձևը պետք է լիներ *Ortehe, որից > անցումով առաջանար *Ortehe, որը վկայված է KURUteruhe ձևով: Հավանաբար, միևնույն երևույթը տեղի է ունեցել նաև տվյալ դեպքում և դարձյալ ինչ-որ մի հունատիպ լեզվի միջոցով, այսինքն՝ *Uigeruhe > Uiteruhe կամ KURUiteruhe, ուստի, *Ortehe > *Orgehe ձևին դուգահեռ մենք կունենանք *Uigeruhe > Uigeruhe, այն տարբերությամբ միայն, որ տվյալ դեպքում g-ն ոչ թե հնչյունափոխվել է ձ-ի (ինչպես *Orgehe > Արձախ > Արցախ ձևում), այլ մնացել է նույնությամբ՝ որպես գ:

Ինչպես արդեն նշվեց, գոյություն է ունեցել e > a հնչյունափոխություն, որը տվյալ դեպքում կարող էր նույնպես տեղի ունենալ, իսկ o-ն սեպագրում արտահայտվել է u նշանով⁴⁰, իսկ ընդունենք, որ ուրարտերենի -(e)he վերջածանցին հայերենում փոխարինելու էր -f հոգնակիության ցուցիչը, ապա կստանանք *Uigeruhe > *Գուգարոֆ, որի ուղղականը կհնչեր *Գուգա՛րոֆ, ուստի, շեշտազուրկ n-ն ընկնելով կստացվեր Գուգա՛րֆ, որը վկայված է⁴¹,

²⁶ CICH, XI (Հմմտ. УКН, № 28, вс, տող 10, HChI, № 16, V).

²⁷ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2—4) (այսուհետև՝ АВИИУ), № 26 (ос, տող 36 հաշ.):

²⁸ АВИИУ, № 42 (տող 29 հաշ., 28 հաշ.), № 43, № 44 (տող 43 հաշ.):

²⁹ УКН, № 21, տող 12 և այլուր:

³⁰ АВИИУ, № 34.

³¹ УКН, № 133, տող 5, № 127, V, տող 49:

³² И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963 (այսուհետև՝ УПД), № 12, лс, տող 2:

³³ УКН, № 158, տող 19, № 156, B1, տող 22:

³⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 386:

³⁵ АЭВ, XII, CICH, XXXV (Հմմտ. УКН, № 155, D, տող 5, HChI, № 103, § 11, III).

³⁶ Ստեփաննոս Օրբելյան, էջ 22:

³⁷ Մովսես Խորենացի, էջ 328:

³⁸ ЛУЦГА, էջ 86—88:

³⁹ Հ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, II, Երևան, 1944, էջ 390:

⁴⁰ И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967, էջ 124, ծան. 19, ինչպես նաև նրա նախորդ այլ աշխատանքներում:

⁴¹ ՀՀԱ, էջ 106, 109 և այլ հեղինակների մոտ:

իսկ սեռականը՝ շեշտը սղված ո-ի տեղը տեղափոխվելու, այն վերականգնելու, սակայն ո>ա հնչյունափոխությամբ և հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչով կատարվելու Գուգարա՝ց, որը նույնպես վկայված է⁴²:

Հետևաբար, մի կողմից ունենք *Uqeruhe>Uiteruhe կամ KUPUiteruhe, մյուս կողմից՝ Uqeruhe>*Uqeruhe>*Գուգա՝rnf>Գուգա՝rf>Գուգարա՝ց:

II. Երկրանունից (ցեղանունից)՝ գավառանուն — 1. IAbellanehe կամ KURAbellanehe (Աբելեանե): Առաջին անգամ հիշատակվում է Արգիշթե I-ի⁴³, իսկ այնուհետև Սարգուրե II-ի կողմից⁴⁴, ինչպես նաև Կարմիր բլուրից հայտնաբերված սալիկներում՝ որպես անձնանուն⁴⁵:

Նկատի ունենալով ինչպես ուրարտա-հայկական և բուն հայկական ia>ea (եա), իա>եա անցումները⁴⁶, այնպես էլ ուրարտերենի -ehje վերջածանցի փոխարեն հայերենում -ի հոգնակիության ցուցիչի հանդես գալը. մանավանդ Այրարատի Աբելեանք գավառի⁴⁷ գոյությունը ուրարտական հիշյալ երկրի տարածքում, ստանում ենք IAbellanehe կամ KURAbellanehe >Աբելեանե, ինչպես ժամանակին եզրակացրել է Կ. Բասմաջյանը⁴⁸:

2. KURAbune (Հաւնունի): Հիշատակվում է Արգիշթե I-ի⁴⁹ և Սարգուրե II-ի մոտ⁵⁰, նկատի ունենալով այս տեղանվան bu վանկի փոխարեն ru ընթերցումը, ինչպես նաև Տուրուբերանի Ապահունիք գավառի անունը⁵¹, Ն. Մառը ենթադրում է, որ հիշյալ երկիրը հենց Ապահունիքն է⁵², Միևնույն կարծիքն է հայտնում նաև Գ. Ղտփանցյանը⁵³, սակայն, միաժամանակ կասկածի տակ է առնում այդ զուգահեռի ճշմարտացիությունը⁵⁴:

Քանի որ KURAbune երկիրը ըստ ուրարտական աղբյուրների տեղորոշվում է Այրարատի Շիրակ գավառի մոտակայքում, ինչպես և նույն նահանգի Հաւնունիք գավառը⁵⁵ մոտավորապես տվյալ շրջանում, Ն. Հարությունյանը իրավացիորեն հիմնավորում է KURAbune >Հաւնունի գուգահեռը⁵⁶: Անցումը, մեր կարծիքով, կատարվել է հետևյալ կերպ. KURAbune >Աւուն (b>ւ

⁴² Ստեփաննոս Օրբելյան, էջ 24, 185 և այլ պատմիչների մոտ:

⁴³ MLV, II (հմմտ. ՄԿՈ, № 127, I, տող 17, HChI, № 80, § 2, I):

⁴⁴ АЭВ, XI, CICH, XXXIV (հմմտ. ՄԿՈ, № 155, C, տող 7, 21, 36, 37, F, տող 16, HChI, № 103, § 3, I, IV, VI; § 4, VII; § 15, IX):

⁴⁵ УПД, № 1, տող 10:

⁴⁶ ЛУПГА, էջ 70:

⁴⁷ ՀՀԱ, էջ 110 և այլ հեղինակների մոտ:

⁴⁸ Կ. Հ. Բասմաջյան, Հայ նախարարությունները բեհռաձև արձանագրությանց մեջ («Բանասիր», Փարիզ, 1902, № 7—9, էջ 239):

⁴⁹ MLV, II (հմմտ. ՄԿՈ, № 127, I, տող 12, HChI, № 80, § 1, VI), CICH, XXV^I (հմմտ. ՄԿՈ, № 128, BI, տող 38, HChI, № 82, Rs, VIII):

⁵⁰ АЭВ, XIII, CICH, XXXVI (հմմտ. ՄԿՈ, № 155, F, տող 14, HChI, № 103, § 15, IX):

⁵¹ ՀՀԱ, էջ 108 և այլ հեղինակների մոտ:

⁵² АЭВ, էջ 58—59:

⁵³ Г. А. Капанцяна, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940 (այսուհետև՝ ИЛЗТДА), էջ 5 և այլուր, ինչպես նաև նրա այլ աշխատանքներում:

⁵⁴ ИЛЗТДА, էջ 46:

⁵⁵ ՀՀԱ, էջ 110 և այլ հեղինակների մոտ:

⁵⁶ Н. В. Арутюнян, Биянили (Урарту), Ереван, 1970 (այսուհետև՝ БУ), էջ 401—402 և նրա նախորդ այլ աշխատանքներում:

հնչյունափոխությունները և վերջին կիսաձայն *e*-ի անկմամբ) > *Ատուն + ունիփ > Հաւնունիփ (սկզբի աճական հնչյունով, որը սովորական է հայերենի համար⁵⁷ և առաջին անշեշտ ու-ի բնական անկմամբ):

3. 1Qatarza կամ KURQatarza (Կղարջֆ): Հիշատակվում է Մինուայի⁵⁸ և Արգիշթե I-ի կողմից⁵⁹, Տվյալ երկրի տեղագրության վերաբերյալ եղած բազմաթիվ ենթադրությունների մեջ ամենահավանականը Գ. Մելիքիշվիլու կարծիքն է, ըստ որի այն գտնվել է Չլդր լճից արևմուտք՝ Կուրի ակունքների և Ճորոխի միջին հոսանքների միջև⁶⁰:

Նկատի ունենալով Գուգարքի Կղարջք գավառի անունը⁶¹, 3. Մարկվարտը անցկացնում է KURQatarza > Կղարջֆ զուգահեռը⁶², որը, անկասկած, ճիշտ է: Անցումը, հավանաբար, կատարվել է հետևյալ ձևով. KURQatarza (հունական աղբյուրներում հայտնի է Κοταρζηνή ձևով⁶³, որը, սակայն, Ք. Պատկանյանի կարծիքով պետք է ուղղել Κοταρζηνή⁶⁴) > *Qalarza, որտեղ առկա է > I հնչյունափոխությունը հանդիպում է նաև այլ դեպքում: Օրինակ, աքադ.-I Tugdami⁶⁵ (I Tug-dam-mi-l)⁶⁶ > հուն. Αύγαμις⁶⁷ (ըստ Ի. Դյակոնովի)⁶⁸:

Եթե այս ենթադրությունը հավանական համարվի (իսկ այն հավանական չհամարվել չի կարող), ապա կարելի է հավանական համարել նաև այն, որ KURQatarza > *Qalarza անցման մեջ է > I հնչյունափոխությունը կրում է հունատիպ ինչ-որ մի լեզվի ազդեցությունը: Անգամ այդ տեղանվան առաջին սասը որպես առանձին բառ՝ qat, հիշեցնում է խեթ. katta «տակ, ներքև»⁶⁹ և հուն. γὰρ «ներքև, տակ»⁷⁰ բառերը, իսկ երկրորդ մասը՝ -arza (< *arīza, մեր կարծիքով), Հայաստանի տեղանուններում հանդիպող -առիճ հատվածը (հմմտ. Բաղալառիճ⁷¹, Կիթառիճ⁷², Մկնառիճ⁷³ և այլն), որը հունական աղբյուրներում հանդիպում է որպես -αριζα, իսկ լատինական աղբյուրներում՝

57 Հ. Հ. Կարազուղյան, Սեպագիր աղբյուրների Ալիա քաղաքը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 4) (այսուհետև՝ ՍԱԱՔ), էջ 97:

58 CICH, IV, V (հմմտ. УХН, № 20, лс, տող 7 և այլուր, HChI, № 6, II և այլուր)

59 MLV, VI (հմմտ. УХН, № 127, V, տող 48, HChI, № 80, § 12, VII), CICH, XXVI (հմմտ. УХН, № 128, B1, տող 35, HChI, № 82, Rs, VIII):

60 ИДГ, 113.

61 ՀՀԱ, էջ 110 և այլ հեղինակների մոտ:

62 J. Marquart, Eransahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, էջ 108:

63 Ptol., V, 13, 9.

64 К. П. Патканов, Армянская география VII века, СПб., 1877, էջ 52, ծան. 172:

65 АВНИУ, № 78.

66 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 240, ծան. 3, էջ 285, ծան. 1:

67 Plut., Mar., XI, Strabo, I, 3, 21.

68 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 240, ծան. 4:

69 J. Friedrich, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952—1954, էջ 105:

70 И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, I—II, М., 1958 (այսուհետև՝ ДГРС, I համ II), I, էջ 880:

71 «Ազաբանգեզալ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 401:

72 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլին», Թիֆլիս, 1913 (կազմի վրա՝ 1912), էջ 272: Բնագրում՝ Կթոնի:

73 «Ղազարալ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907 (կազմի վրա՝ 1908), էջ 299, Բնագրում՝ Մկնառիճ:

-ariza, ինչպես ենթադրում է Գ. Ղսփանցյանը⁷⁴, Օրինակ, հուն. Βαζγοῖδαριζα⁷⁵, լատ. Aladarariza⁷⁶, Ընդ որում, հիշյալ qat ձևերքին, ստորին» բառով կազմված տեղանունները եզակի չեն։ Այսպես, օրինակ, հին պարսկական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է Katpatuka երկիրը⁷⁷, որի անունը պարզապես կազմված է հունարեն վերոհիշյալ առաջին բառով և մեղ առաջին անհայտ *Patuka տեղանունով և, փաստորեն, նշանակում է «Ներքին Պատուկա»։

Հունարենի լեզվական կանոնների համաձայն բառաբարդության ժամանակ առաջ բառի վերջին ձայնավորը ընկնում է, իսկ եթե հաջորդ բառը սկսվում է π-ով, ապա առաջ բառը վերածվում է առ-ի⁷⁸։ Այս իսկ պատճառով էլ հունական աղբյուրների Καπαδοκία⁷⁹ (հայկական աղբյուրների Կապադոկիա)⁸⁰ երկրանունը, բնականաբար, ծագում է սույն Katpatuka երկրանունից։

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ստուգաբանվող KURQatarza երկրանունը ևս կարող է նման կազմություն ունենալ և նշանակել «Ներքին Ար(ի)զա», որի հնչյունային անցումները կարելի է տալ հետևյալ ձևով։ KURQatarza (հուն. Κοταρζηνι) > *Qatarza (որից l > η և z > δ > ջ անցումներով և հայերենի տեղանվանակերտ -f հոգնակիության ցուցիչի հավելմամբ) > *Կադարջաֆ (ուղղական հոլովում շեշտը նախավերջին վանկի ձայնավորի վրա ընկնելու պատճառով վերջին ա-ի անկմամբ) > *Կադա՛րջֆ (հմմտ. հայերենում զույգ ա-երով պահպանված ձևը՝ Կադարջօք)⁸¹ > Կադա՛րջֆ (առաջին անշեշտ ա-ի անկմամբ, որի սեռականը՝ շեշտը վերջին վանկի ընկած ձայնավորի տեղը տեղափոխելով և այն վերականգնելով) > Կադարջա՛գ (որը վկայված է)⁸²։

Այսպիսով, հայերենում հանդիպող *Կադարջֆ (վկայված՝ Կադարջօք) և Կադարջաֆ ձևերը, որոնք դեռևս պահում են ուրարտերենով վկայված KURQatarza ձևի բոլոր երեք a (ա) հնչյունները, ինչպես նաև տվյալ տեղանվան մեջ առկա t > l (լ) հնչյունափոխությունը, որ անկասկած հնդեվրոպական հունատիպ մի լեզվի օրինաչափության արդյունք է, ցույց են տալիս, որ հայերենում հայտնի ձևերը անմիջականորեն ծագում են ուրարտերենով վկայված համապատասխան ձևից առանց որևէ միջնորդության, որ վրացերենում վկայված միևնույն տեղանունը՝ Klarjeti (ქლარჯეთი)⁸³, փաստորեն, վերցված է տվյալ տեղանվան մեջ հայերենի հնչյունական երևույթների դրսևվորումից և կատարված համապատասխան փոփոխություններից հետո։

4. KURŠuluqu (Մղուկ)։ Հիշատակվում է Արգիշթե II-ի կողմից, Սիսիանի

⁷⁴ Գ. Ա. Капанцян, Хаһаса — колыбель армян, Ереван, 1947 (կազմի վրա՝ 1948) (այսուհետև՝ ХКА), էջ 44, ծան. 1 և այլ աշխատանքներում։

⁷⁵ Strabo, XII, 3, 28.

⁷⁶ ХКА, էջ 44, ծան. 1։

⁷⁷ R. G. Kent, Old Persian. Grammar, Texts, Lexicon, New Haven, 1953, էջ 178։

⁷⁸ ДГРС, I, էջ 880։

⁷⁹ Her., I, 71, 73, 76. V, 52. VII, 26, ինչպես նաև այլ պատմիչների մոտ։

⁸⁰ Ազաթանգեղոս, էջ 349, ինչպես նաև այլ պատմիչների մոտ։

⁸¹ Նույն տեղում, էջ 425։

⁸² Մովսես Խորենացի, էջ 234։

⁸³ «Картлис цховреба (История Грузии)», I—II, Тбилиси, 1955—1959 (այսուհետև՝ КЛ, I կամ II), I, էջ 4 և այլուր։

շրջանի Արևիս գյուղում հայտնաբերված կոթողի վրա⁸⁴, Ն. Հարությունյանը նկատի ունենալով Սյունիքի Մզուկ գավառի անունը⁸⁵, միանգամայն իրավացիորեն ենթադրում է, որ այն ծագում է հիշյալ KUR\$uluqu երկրանունից⁸⁶:

Նկատի ունենալով ուրարտա-հայկական հնչյունական օրենքները, կարելի է ենթադրել, որ սույն KUR\$uluqu տեղանունը հնչել է *\$uluqo, որից առաջին անշեշտ u-ի անկումով, l>ղ հնչյունափոխությամբ, վերջին անշեշտ o-ի անկմամբ և հայերենի հոգնակիության -f ցուցիչի հավելմամբ՝ Մղուկ, որը վկայված է⁸⁷, հայցականը՝ Մղուկս, որը դարձյալ վկայված է⁸⁸, վերջին ընկած ձայնավորի վերականգնմամբ և o>ա հնչյունափոխությամբ՝ Մղկաց, որը նույնպես վկայված է⁸⁹: Ուստի, KUR\$uluqu (*\$uluqo հնչմամբ)> *Մղուկոֆ>*Մղուկաֆ>Մղուկֆ (Մղուկս)>*Մղուկա'ց>Մղկա'ց:

օ. KURTeria (Տրի): Միայն մեկ անգամ հիշատակվում է Սարգուրե II-ի Գանձադռան տարեգրության մեջ՝ Սևանա լճի հարավային ափերին տարածվող երկրները թվարկելուց հետո, մի խումբ այլ երկրների շարքում, որոնք, բնականաբար, գտնվելու էին Սևանա լճից արևելք, ամենայն հավանականությամբ Տրտու գետի ավազանում կամ նրա մոտակայքում: Այն հիշատակվում է եզակի թվի ուղղական-երկրորդ հոլովով՝ KURTe-ri-a-ne ձևով⁹⁰:

Նկատի ունենալով Ուտիքի Տրի գավառի անունը⁹¹, Ս. Երեմյանը անցկացնում է KURTeria>Տրի զուգահեռը⁹²: Այս կարծիքը կարելի է հաստատել ուրարտա-հայկական և զուտ հայկական հնչյունական օրենքներով, որտեղ ուրարտերենի -ia վերջավորությունը հայերենում հանդես է գալիս միայն -ի ձևով, որը ապացուցված է բավարար չափով⁹³: Հետևաբար, տվյալ տեղանվան առաջին անշեշտ e-ի անկումով և վերջավորության -ia>-ի հնչյունափոխությամբ ստացվում է KURTeria>Տրի: Եթե ճիշտ է Ս. Երեմյանի ենթադրությունը և մեր լեզվական ստուգաբանությունը, ապա վստահորեն կարելի է ասել, որ Սարգուրե II-ը եղել է Ուտիքի և Արցախի սահմաններում՝ Տրտու գետի ավազանում, մի հանգամանք, որը շատ կարևոր է ինչպես ուրարտագիտության, այնպես էլ հայագիտության հնադրյուն և կնճռոտ հարցերը լուսաբանելու համար:

ծ. KURUelekuhe կամ KURUelekune (Գեղափունի): Հիշատակվում է Սարգուրե II-ի Գանձադռան տարեգրության մեջ⁹⁴, նրա կրկնօրինակում⁹⁵

⁸⁴ Արձանագրությունը հրատարակության է պատրաստվում Ն. Հարությունյանի կողմից:

⁸⁵ ՀՀԱ, էջ 109, Բնագրում՝ զՄզուկն, որը թերևս պետք է ուղղել՝ զՄզուկս:

⁸⁶ Հիշյալ տեղանվան առաջին վանկի ընթերցումը, որպես \$u և ոչ թե sal-ma, ինչպես ենթադրվում էր սկզբում՝ սեպերը հեռու լինելու պատճառով, ճշտվեց միայն հետագայում: Ա. Գ. Մուկուկիձեի (1876—1905 թթ.) ազգանունն արդյո՞ք սույն տեղանունից չի ծագում:

⁸⁷ Ս տ ե փ ա ն ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 229 և այլ պատմիչների մոտ:

⁸⁸ Նույն տեղում, էջ 34, 38:

⁸⁹ Նույն տեղում, էջ 41, 158:

⁹⁰ AЭB, XIII, ClCh, XXXIII (հմմտ. ՄԿԽ, № 155, F, տաղ 24, HChI, № 103, § 15, XII):

⁹¹ ՀՀԱ, էջ 109, ինչպես նաև այլ հեղինակների մոտ:

⁹² Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյց»-ը («Մառը և հայագիտության հարցեր», Երևան, 1968, էջ 82, որտեղ սակայն տվյալ երկրի անունը տրված է հին ձևով և հոլովական վերջավորությամբ հանդերձ՝ Terianl):

⁹³ ՍԱԱԹ, էջ 94—95, ՄՄԱԳԱ, էջ 76—77:

⁹⁴ AЭB, XII, ClCh, XXXVI (հմմտ. ՄԿԽ, № 155, F, տաղ 17, 20, HChI, № 103, § 15, X—XI):

⁹⁵ ClCh, XXXI (հմմտ. ՄԿԽ, № 156. D1—DII, տաղ 4, 24, HChI, № 102, Rs, I, III):

և Ռուսա I-ի մոտ⁹⁶։ Նկատի ունենալով Սյունիքի Գեղաքունիք գավառի անունը⁹⁷, Գ. Ղափանցյանը անցկացնում է KURUelekukhe կամ KURUelekune > Գեղաքունի գուգահեռը⁹⁸։

Եթե նկատի ունենանք, որ հնդեվրոպական մի շարք լեզուներում, այդ թվում նաև հայերենում եղել է w > g, ı > q ıyau < > q հնչյունափոխություն, ուրարտական-հայկական e > a անցում⁹⁹, ապա կստանանք *Gelakune ձևը, որի վերջին կիսաձայն e-ի անկմամբ, հայերենի -ունի վերջածանցի հավելմամբ (հմմտ. վերոհիշյալ KURAbune > Հաւնունի գուգահեռը) և լ > ղ սովորական հնչյունափոխությամբ կստանանք *Գեղաքունունի, որը հապլոլոգիայի օրենքով կրճատվելով կտար Գեղաքունի, որը և վկայված է¹⁰⁰։ Հետևաբար, անցումը կատարվել է KURUelekune > *Gelakune > *Գեղաքուն + ունի > Գեղաքունի (Գեղաքունի) ձևով։

7. KURZabaha (Ջաախա)։ Հիշատակվում է Արգիշթի I-ի հորինության տարեգրության մեջ¹⁰¹։ Ուրարտական շրջանում նրա տեղադրությունը այնքան էլ պարզ չէ։ Գ. Ղափանցյանը ենթադրում է, որ այն գտնվել է Բասենի շրջակայքում¹⁰²։ Սակայն, ավելի հավանական է Գ. Մելիքիշվիլու կարծիքը, ըստ որի հիշյալ երկիրը գտնվել է Չիքր լճից հարավ-արևմուտք կամ արևմուտք¹⁰³։

Նկատի ունենալով Գուգարքի Ջավախք գավառի անունը (վրացերենում այն հանդիպում է ჯავახეთი ձևով)¹⁰⁴, Հ. Սանտալճյանն անցկացնում է KURZabaha > Ջաախա գուգահեռը¹⁰⁵, որը հետագայում պաշտպանում է Գ. Ղափանցյանը¹⁰⁶։ Անցումը, հավանաբար, կատարվել է z > d > ʒ և b > v հնչյունափոխությամբ, որը նկատելի է նաև այլ դեպքերում և հայերենի տեղանվանակերտ հոգնակիության -ք ցուցիչի հավելումով, այն է՝ KURZabaha > *Ջաախաք, որից վերջին անշեշտ ա-ի անկումով՝ Ջաախաք, որը վկայված է¹⁰⁷, ինչպես նաև շեշտը սեռական հոլովում տեղափոխվելով ընկած ա-ի տեղը՝ այն վերականգնելով և սեռական հոլովի հոգնակիության -ց ցուցիչի հետ միասին՝ Ջաախաք, որը նույնպես վկայված է¹⁰⁸։ Հետևաբար, KURZabaha > *Ջաախաք > Ջաախաք > Ջաախաք, մի երևույթ, որը խո-

⁹⁶ YKH, № 265, տող 2, HChI, № 119, II; YKH, № 266, տող 4, HChI, № 118, II.

⁹⁷ Մո վ ս ե ս հ ո Ր ե ն ա ց ի, էջ 41 (ծան. 4), 120 (ծան. 12), ինչպես նաև այլ պատմիչների մոտ։

⁹⁸ ИЛЭТДА, էջ 22, ինչպես նաև նրա նախորդ և հաջորդ շրջանի աշխատություններում։

⁹⁹ ЛУИГА, էջ 69—73, ՍԱԴԵ, էջ 71։

¹⁰⁰ Մո ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե լ յ ա ն, էջ 12 և այլուր, ինչպես նաև ուրիշների մոտ։

¹⁰¹ MLV, II (հմմտ. YKH, № 127, I, տող 9, HChI, № 80, § 1, V)։

¹⁰² Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940 (այսուհետև՝ ՈւՊ), էջ 158։

¹⁰³ YKH, էջ 446 և այլ աշխատանքներում։

¹⁰⁴ КИ, I, էջ 49 և այլուր։

¹⁰⁵ Հ. Սանտալճյան, Ասորեստանի և պարսիկ սեպագիր արձանագրությունք կամ նոցին քաղվածք, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմության կը վերաբերին, Վիեննա, 1901, էջ 44։

¹⁰⁶ ՈւՊ, էջ 158 և այլ աշխատանքներում։

¹⁰⁷ ՀՀԱ, էջ 110 և այլ հեղինակների մոտ։

¹⁰⁸ Մո վ ս ե ս հ ո Ր ե ն ա ց ի, էջ 113։

սում է տվյալ տեղանվան կազմավորման ընթացքում հայերենի քերականական օրենքների բացառիկ դերի մասին: Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն երևույթը, որ երբ վրացական քաղաքական իշխանության տարածման հետևանքով ինչպես տվյալ այնպես էլ հարակից շրջաններն ընկան վրաստանի գերիշխանության տակ և երկրի բնակչությունը վրացիացավ, այնուամենայնիվ, մեսխերին և ջավախներին հնարավոր չէր տարբերել հայերից¹⁰⁹:

III. Երկրանունից՝ ֆաղաֆանուն — 1. KURGiarnia (Գառնի): Հիշատակվում է Արգիշթե I-ի Գառնիում հայտնաբերված արձանագրության մեջ եզակի թվի ուղղական-երկրորդ հոլովով՝ KUR[G]I(?)-[ar-ni-a]-ne¹ ձևով¹¹⁰, նկատի ունենալով դեռևս հայ մատենագրությանը հայտնի Գառնի քաղաքը¹¹¹ (այժմ՝ Նույնանուն գյուղ), Ն. Հարությունյանն անցկացնում է KURGiarnia > Գառնի զուգահեռը¹¹²: Անցումը միանգամայն օրինաչափ է, որովհետև ուրարտերենից հայերենին անցած տեղանուններում գոյություն ունի ia > a հնչյունափոխություն՝ բառամիջում և ia > i՝ բառավերջում, որի մասին խոսք եղավ վերևում:

2. KURGuria (Գուրիս): Հիշատակվում է Ռուսա I-ի մոտ¹¹³, այն 19 երկրների շարքում, որոնք գտնվում էին i-ša-ne ap-ti-ne šu-i-ni-a ŠEŠLAM GENba-ba-ni-a [k]u-ru-ne-e¹⁴, այսինքն՝ «այս կողմից ծովային գավառում՝ լեռան ստորոտում»¹¹⁵, Հետևաբար, տվյալ KURGuria երկիրը գտնվելու էր Սևանա լճի ավազանից դուրս՝ կա՛մ դեպի արևելք (հետագայի Արցախում), կա՛մ դեպի հարավ-արևելք (հետագայի Սյունիքում): Մենք հակված ենք ընդունելու երկրորդ ենթադրությունը, քանի որ նույն արձանագրության մեջ հիշատակվող մյուս 4 երկրները, որոնք գտնվում էին i-na-ne ap-ti-ne šu-i-ni-a ŠEŠLAM¹¹⁶, այսինքն՝ «այս կողմից ծովային գավառում», տարածվում էին Սևանա լճի հարավ-արևմտյան ափերով մինչև Արկիճի գետի հովիտը, իսկ նրանից արևելք եղած երկրները, որոնք հայտնի էին Սարգուրե II-ի Գանձադան տարեգրությունից¹¹⁷ և որոնք նա նվաճել էր մինչև KURUrtehe երկիրը¹¹⁸, այն է՝ Արցախ, ինչպես նշվեց վերևում, Ռուսա I-ի նշած 19 երկրների շարքում բոլորովին չեն հիշատակվում: Հետևաբար, Ռուսա I-ը Արկիճի գետի հովիտով բարձրանալով վեր, անցել է հետագայի Սելիմի լեռնանցքով և մտել Սյունիքի տարածքը: Ուստի, հիշյալ 19 երկրները գտնվելու էին Սղեգիսի և Արփայի վերին հոսանքների շրջանում և հատկապես Որոտանի ավազանում: Այս տեսակետից էլ, նկատի ունենալով

¹⁰⁹ «Народы Кавказа», I, М., 1960, էջ 28:

¹¹⁰ YKH, № 386, տող 3 (որտեղ ne=ni):

¹¹¹ Մ ո վ ս ե ս ն ո Ր ե ն ա ց ի, էջ 41, 241, Ե Ղ ի 2 է, էջ 68, 79:

¹¹² БУ, էջ 427 և նրա նախորդ աշխատանքներում:

¹¹³ KH3, XVIII (հմմտ. YKH, № 266, տող 9, HChI, № 118, II).

¹¹⁴ KH3, XVIII (հմմտ. YKH, № 266, տող 12—13, HChI, № 118, II).

¹¹⁵ Հ. Հ. Կ ա ր ա զ յ ո ղ յ ա ն, Ուրարտական նորահայտ գաղափարագրեր (ՀՍՍՀ ԳԱ «Արաբեր», 1978, № 2, էջ 66):

¹¹⁶ KH3, XVIII (հմմտ. YKH, № 266, տող 5, HChI, № 118, II).

¹¹⁷ YKH, № 155, F, տող 22—24:

¹¹⁸ YKH, № 161, տող 5:

հետագայի Գորիս քաղաքի անունը¹¹⁹ (հայկական աղբյուրներում՝ Սյունիքի Հաբանդ գավառում հիշատակված Գորայք ավանը¹²⁰, հավանաբար, միևնույն Գորիս քաղաքն է), թերևս կարելի է առաջարկել KURGuria > Գորիս զուգահեռը, որը կարելի է հաստատել հնչյունական որոշակի օրինաչափություններով:

Հայտնի է, որ ուրարտերենում օ-ի համար հատուկ նշան չի եղել և այդ պատճառով այն տրվել է սեպագիր u-ով, ինչպես նշվեց վերևում: Ուստի այդ երևույթը կարող էր տեղի ունեցած լինել նաև տվյալ դեպքում: Այնուհետև, վերևում նշվեց, որ ուրարտերենի -ia վերջավորությունը հայերենում հանդես է գալիս որպես -ի, որով և կատարվեց KURGuria > *Գորի զուգահեռը: Բայց, քանի որ տվյալ ձևը հայերենում որպես երկրանուն անհրաժեշտաբար պետք է ստանար տեղանվանակերտ -f հոգնակիության ցուցիչ, ապա այն կարող էր հանդես գալ որպես *Գորիֆ: Ուստի, *Գորիֆ > Գորիս անցումը կլիներ միանգամայն հնարավոր:

Այսպիսով, KURGuria > *Գորի > *Գորիֆ (վկայված նաև Գորայք ձևով) > Գորիս, որով հաստատվում է նաև ուրարտացիների՝ Սյունիքի տարածքում, տվյալ դեպքում Գորիսի շրջակայքում եղած լինելու հանգամանքը:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև հետևյալը: Ասորեստանյան աղբյուրներում հիշվում է KURGuriania անունով մի երկիր, որը գտնվում է Ուրարտուի և Գամիրայի միջև և հարկ է վճարում Ուրարտուին¹²¹, Ենթադրվում է, որ ուրարտական աղբյուրներում հիշատակվող KURQuriane երկիրը¹²² միևնույն KURGuriania-ն է¹²³: Հետևաբար, ստացվում է այնպես, որ Գամիրա երկիրը գտնվելու է մոտավորապես Գուգարքում կամ Տալքում, որը ճշմարտությանը չի համապատասխանում:

Մեր կարծիքով, ասորեստանյան աղբյուրների KURGuriania երկիրը, որը, հավանաբար, վերցված է ուրարտերենի եզակի թվի ուղղական-երկրորդ հոլովով տրված *Guriane (-ia սովորական վերջածանցով կազմված) ձևից, ոչ թե ուրարտական KURQuriane երկիրն է, որը գտնվել է հետագայի Շիրակի մոտակայքում, Արագածի հյուսիսային լանջին, այլ վերոհիշյալ KURGuria երկիրը, այսինքն՝ հետագայի Սյունիքի արևելյան հատվածը: Հետևաբար, եթե ասորեստանյան աղբյուրների KURGuriania, այն է՝ ուրարտական աղբյուրների KURGuria երկիրը գտնվել է Ուրարտուի և Գամիրայի միջև, ապա կարելի է եզրակացնել, որ Գամիրա երկիրը տարածվել է հետագայի Արցախի և Ուտիքի մոտակայքում, ամենայն հավանականությամբ, Կուրի հարավային ափերին: Եթե նկատի ունենանք անտիկ աղբյուրների տվյալները հետագայի Գանձակի շրջակայքը սկյութացիների կողմից նվաճվելու վերաբերյալ, որի պատճառով այդ շրջանը կոչվեց Σαχασηνη¹²⁴ (հայկական աղբյուրներում՝ Շակաշեն)¹²⁵, ապա կարելի է ենթադրել նաև, որ եթե ասորեստանյան աղբյուր-

119 Ս. էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, I, Վենետիկ, 1902, էջ 524—527:

120 Ստեփաննոս Օրբելյան, էջ 517:

121 АВИИУ, № 50 (11):

122 АЭВ, XIII, СICh. XXXVI (հմտ. УКН, № 155, F, տող 6, HChI, № 103, § 15, III):

123 АВИИУ, № 50 (11), ծան. 2, որը այնուհետև ընդունվել է մյուս ուրարտագետների կողմից:

124 Strabo, XI, 8, 4.

125 ՀՀԱ, էջ 109 և այլ հեղինակների մոտ:

ների KURGurianla երկիրը ուրարտական աղբյուրների KURGuria երկիրն է (ընդ որում, երկու դեպքում էլ խոսքը Ռուսա I-ի ժամանակաշրջանի մասին է), ուրեմն, Գամիրա երկիրը տվյալ դեպքում Շակաշենն է։ Դեռ ավելին, մեր կարծիքը հնարավոր է հաստատել անտիկ աղբյուրների մեկ այլ տեղեկությամբ ևս, ըստ որի ինչ-որ թրակիացիներ հաստատվեցին Հայաստանից վերև (իմա՝ արևելք) դուրանիացիների և միդիացիների հարևանությամբ¹²⁶։ Հետևաբար, Հայաստանից արևելք գտնվող այս գուրանիացիները ((Γουρανιον), որոնք միաժամանակ միդիացիների հարևաններն էին, կարող են լինել միայն սեպագիր աղբյուրների՝ ուրարտ. KURGuria, աքադ. KURGurlania երկրի բնակիչները։

IV. Երկրանունից (ցեղանունից)՝ գյուղանուն— 1. IQulia (Կուլիջան)։ Հիշատակվում է Արգիշթե I-ի՝ Կուլիջան (Սպանդարյան) գյուղում գտնված արձանագրության մեջ¹²⁷։ Այս զուգահեռը՝ IQulia > Կուլիջան, անցկացնում է Մ. Նիկոլսկին¹²⁸, որն ընդունել է Գ. Ղափանցյանը¹²⁹։ Անցումը միանգամայն օրինաչափ է, քանի որ ինչպես վերևում բազմիցս նշվեց, ուրարտերենի -ia վերջավորությունը հայերենում հանդես է գալիս որպես -ի, որի վրա, սակայն, տվյալ դեպքում գումարվել է օտարամուտ բնակչության լեզվի ածանցներից մեկը՝ IQulia > Կուլի + ջան > Կուլիջան։

2. KURUburda (Հոբարձի)։ Հիշատակվում է Արգիշթե I-ի խորխոռյան տարեգրության մեջ¹³⁰ և նրա կրկնօրինակում¹³¹,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ երկրի արքայական քաղաքը Արգիշթե I-ի մոտ կոչվել է URUErdua¹³² և այլ առիթով Սարգսյան II-ի մոտ ընդհանրական թվարկմամբ հիշատակվում է նաև Ուրարտուի հյուսիսում գտնվող բնակավայրերի շարքում¹³³ և (որ շատ կարևոր է) հետագայի Արդվի գյուղի անունը¹³⁴ հեշտությամբ բխեցվում է տվյալ քաղաքի անունից (URUErdua > *Արդուի > Արդուի > Արդվի)¹³⁵, կարելի է եզրակացնել, որ ուրարտական աղբյուրների KURUburda երկիրը, որը, մեր կարծիքով, անտիկ աղբյուրներում հիշատակվում է՝ Οβορδονίη δևով¹³⁶, գտնվել է ներկայիս Դեբեդի ձախակողմյան (արևմտյան) վտակ Ձորագետի ստորին և միջին հոսանքների շրջանում։ Հիշյալ KURUburda—Օβορδονίη զուգահեռը իր հերթին ցույց է տալիս, որ ուրարտական հիշյալ երկրանունը հնչել է *Oborda, որը ուրարտա-հայկական հնչյունական օրենքներին համապատասխան կարող էր հանդես գալ *Աբարդէ կամ *Ոբարդէ ձևերով, որոնք ավելի ուշ պետք է տալին *Աբարդի կամ *Ոբարդի ձևերը։ Սրանցից երկրորդը շատ նման է Ձորագետի ստորին հոսանքների մոտակայքում, Ստեփանավանից արևելք գտնվող

¹²⁶ Strabo, XI, 14, 14.

¹²⁷ KH3, VII, C1Ch, LX (հմմտ. ՄԿԽ, № 132, տող 7, HChI, № 87, II)։

¹²⁸ KH3, էջ 72։

¹²⁹ ՈւՊ, էջ 171։

¹³⁰ MLV, III (հմմտ. ՄԿԽ, № 127, II, տող 40, 41, HChI, № 80. § 4, VI)։

¹³¹ C1Ch, XXVI (հմմտ. ՄԿԽ, № 128, A 2, տող 29, 30, HChI, № 81, § 4, VI)։

¹³² MLV, III (հմմտ. ՄԿԽ, № 127, II, տող 42, HChI, № 80. § 4, VI)։

¹³³ MLV, XII, A9B, XIV, C1Ch, XXXII (հմմտ. ՄԿԽ, № 155, A, տող 18, HChI, № 103, § 16, VII)։

¹³⁴ «Հայկական ՍՍՀ վարչա-տեղեկատվական բաժանումը», Երևան, 1976, էջ 47։

¹³⁵ ЛУЦГА, էջ 70։

¹³⁶ Ptol., V, 13, 13.

Հորարծի գյուղի անվանը¹³⁷, Ուատի կարելի է ենթադրել, որ բացի առաջին աճական հնչյունից, որը նկատելի է նաև այլ դեպքերում¹³⁸, այստեղ առկա է հայերենին հատուկ դ>ձ հնչյունափոխությունը ևս: Այսպես, օրինակ, ունենք խանդ-նախանձ, խեղդել-ճեղձուցիչ և այլ զուգահեռներ: Հետևաբար, KURU-burda ('Օթթընդի') > *Ոթարդէ > *Ոթարդէ > *Ոթարդի > *Ոթարծի > Հոթարծի:

V. Երկրանունից (ցեղանունից)՝ գետանուն—1. ¹Arqude կամ KURArqude (Արկիճի): Հիշատակվում է Սարգուրե II-ի Գանձադռան տարեգրության մեջ¹³⁹ և Սևանա լճի հարավ-արևելյան ափին՝ Մովակ գյուղում հայտնաբերված ժայռաքերտի վրա¹⁴⁰, ինչպես նաև Ռուսա I-ի՝ Մովինարում գտնված ժայռափոր արձանագրության մեջ¹⁴¹: Ենթադրվում է, որ տվյալ երկիրը գտնվել է Սևանա լճի հարավային ափերին¹⁴², մեր կարծիքով՝ Արկիճի գետի հովտում, ինչպես նշվեց վերևում: Հենց այս հանգամանքը ստիպում է մտածել, որ KURArqude երկրի անունը թերևս պահպանվել է Արկիճի գետի անվան մեջ: Անցումը, հավանաբար, կատարվել է այսպես. KURArqude > *Արկուկ (որից վերջին հնչյունի ձևափոխությամբ՝ կ>ծ>ճ) > *Արկուճ: Բնականաբար, երկրանունը գետանվան վրա տարածվելիս կարող էր հանդես գալ սևոական հոլովով, այն է՝ *Արկուճի գետ, որը հետագայում կարող էր գործածվել նաև առանձին՝ *Արկուճի, իսկ ու>ը հնչյունափոխությամբ՝ *Արկըճի: Կարելի է ենթադրել, որ հենց այս ձևից էլ առաջանում է Արկիճի գետի այժմյան անունը:

2. ¹Eriahe կամ KUREriahe (Երասի): Հիշատակվում է Արգիշթե I-ի խորհուրդի տարեգրության մեջ¹⁴³, նրա կրկնօրինակում¹⁴⁴ և լեռնականի մոտ գտնվող Վահրամաբերդ գյուղի ժայռափոր տեքստում¹⁴⁵, ինչպես նաև Սարգուրե II-ի Գանձադռան տարեգրության նիստերին¹⁴⁶:

Նկատի ունենալով Երասի գետի անունը¹⁴⁷, Մ. Նիկոլսկին անցկացնում է ¹Eriahe կամ KUREriahe > Երասի զուգահեռը¹⁴⁸: Ինչպես արդեն նշել ենք, ուրարտերենի ia կապակցությունը բառամիջում տալիս է ա, իսկ վերջին կիսաձայն e-ն, սովորաբար, ընկնում է, ուստի, ¹Eriahe կամ KUREriahe > Երասի, որը տեղանվանակերտ -f հոգնակիության ցուցիչով կլինե՛ր *Երասիf, որի հայցականը (դիտված ուղղական)՝ *Երասիս, իսկ դրափոխությամբ՝ Երասիս¹⁴⁹, ինչպես որ վկայված է: Եթե նկատի ունենանք հունարենի

¹³⁷ «Հայկական ՍՍՀ վարչա-տնտեսական բաժանումը», էջ 85:

¹³⁸ ՍԱԱԲ, էջ 97:

¹³⁹ AЭВ, XII, CICH, XXXV (հմմտ. УКН, № 155, D, տող 60, HChI, № 103, § 12, 1), AЭВ, XIII, CICH, XXXVI (հմմտ. УКН, № 155, F, տող 23, HChI, № 103, § 15, XII):

¹⁴⁰ КНЗ, XV, CICH, LIII (հմմտ. УКН, № 161, տող 2, 4, HChI, № 105, I, II):

¹⁴¹ КНЗ, XVIII (հմմտ. УКН, № 266, տող 5, HChI, № 118, II):

¹⁴² Г. А. Меликшвили, Наирн-Урарту, Тбилиси, 1954 (այսուհետև՝ НУ), էջ 66, 68, 69, 267, 268:

¹⁴³ MLV, II, VI (հմմտ. УКН, № 127, I, տող 11; V, տող 48, HChI, № 80, § 1, V; § 12, VII):

¹⁴⁴ CICH, XXVI (հմմտ. УКН, № 128, B 1, տող 36, HChI, № 82, Rs, VIII):

¹⁴⁵ КНЗ, V (հմմտ. УКН, № 133, տող 3, HChI, № 88):

¹⁴⁶ AЭВ, XI, XII, XIII, CICH, XXXIV, XXXV, XXXVI (հմմտ. УКН, № 155, B, տող 30, C, տող 20, 25, 26, E, տող 20, F, տող 5, 12):

¹⁴⁷ ՀՀԱ, էջ 105 և այլուր:

¹⁴⁸ КНЗ, էջ 88:

¹⁴⁹ ЛУЦГА, էջ 93:

չօ>աօ> անցումը¹⁵⁰ և հայերենի ք>ա հնչյունափոխությունը¹⁵¹, որը տվյալ դեպքում վկայված է հունարենով, ապա կնկատենք, որ հունարենի 'Αρᾶης գետանունը¹⁵² ծագում է հենց վերոհիշյալ *երախս ձևից: Այսպիսով, Ieriahe կամ KUREriahe>*երախ>*երախf>*երախս (հուն. 'Αρᾶης)>երախս:

3. KURQurlane (Կարաւնկու): Հիշատակվում է Սարգուրբ II-ի Գանձադռան տարեգրության մեջ¹⁵³: Գ. Մելիքիշվիլին ենթադրում է, որ սույն երկիրը գտնվել է Երիախե (այժմյան՝ Լենինականի շրջան) և Իյանե (Չլդր լճի շրջան) երկրների միջև¹⁵⁴, մի տեսակետ, որը պաշտպանում է Յ. Քյոնիգը¹⁵⁵: Այս տեսակետը կարելի է ավելի կոնկրետացնել, եթե նկատի ունենանք տարեգրության համապատասխան հատվածի բուն բովանդակությունը, որտեղ ասված է. an-da-né KURE-ri-a-he 'a-al-du-bé GEMEma-at-he KURQu-ri-a-ni-né uš-ta-de KURI-ja-né-e-de¹⁵⁶, այսինքն՝ «մարզը (?) Երիախե անշատեցի (?) բուն Կուրիանեից, արշավեցի Իյանեի-վրա»: Ինչպես երևում է, Երիախե երկիրը ինչ-որ ժամանակամիջոցում վարչականորեն ենթարկվել է Կուրիանե երկրին: Հետևաբար, այն ոչ թե Երիախե և Իյանե երկրների միջև է գտնվել, այլ սահմանակից է եղել Երիախեին, անկասկած՝ հարավից, տարածվելով ներկայիս Անիի և Արթիկի շրջաններում: Եթե ասենք, որ KURQurlane երկրի անունը հետագայում կարող էր պահպանված լինել տվյալ շրջաններում հայտնի միակ նշանավոր գետի անվան մեջ, որն է Կարաւնկու (այժմ՝ Մանթաշ), ապա սխալված չենք լինի:

Սույն KURQurlane>Կարաւնկու զուգահեռը կարելի է հաստատել հնչյունական օրինաչափություններով: Վերևում նշեցինք, որ սեպագիր u-ով արտահայտվել է նաև օ հնչյունը (որը հայերենում կարող էր հանդես գալ օ>ա հնչյունափոխությամբ), իսկ վերջին կիսաձայն e-ն ընկել է, այսինքն՝ KURQurlane (*Qorlane հնչմամբ)>Կարաւն+կու>Կարաւնկու, որտեղ կու հատվածը առայժմ մեզ անհայտ մի լեզվից է, որը, հավանաբար, նշանակել է «գետ»:

VI. Քաղաքանունից՝ քաղաքանուն— 1. URUErebune (Երեւան): Հիշատակվում է Արգիշթե I-ի Խորխոռյան տարեգրության ժայռափոր էջերի վրա¹⁵⁷, նրա կրկնօրինակի նիստերին¹⁵⁸, Արին բերդից հայտնաբերված՝ Երե-

¹⁵⁰ П. Шантрян, *нзл. աշխ.*, էջ 292, 293, С. М. Соболевский, Древнегреческий язык, М., 1948, էջ 13, ДГРС, II, էջ 1820:

¹⁵¹ ЛУЦГА, էջ 69—73:

¹⁵² Ptol., V, 13, 3; V, 13, 6; V, 13, 9; VI, 2, 1 և այլ հեղինակների մոտ:

¹⁵³ АЭВ, XIII, СICh, XXXVI (հմմտ. УКН, № 155, F, տող 6, HChI, № 103, § 15, III):

¹⁵⁴ НУ, էջ 61 և այլուր:

¹⁵⁵ HChI, էջ 198.

¹⁵⁶ АЭВ, XIII, СICh, XXXVI (հմմտ. УКН, № 155, F, տող 5—6, HChI, № 103, § 15, III):

¹⁵⁷ MLV, III (հմմտ. УКН, № 127, II, տող 33, HChI, № 80, § 4, IV):

¹⁵⁸ СICh, XXVII (հմմտ. УКН, № 128, A2, տող 15, HChI, № 81, § 4, IV):

վանի «ծննդյան վկայական»-ի մեջ¹⁵⁹ և մի շարք այլ արձանագրություններում¹⁶⁰,

URUErebune> Երեւան գուգահեռը առաջարկել է Մ. Իսրայելյանը¹⁶¹։ Այն հաստատվում է նաև հնչյունական համապատասխան օրինաչափություններով։ Հայտնի է, որ ուրարտա-հայկական անցումներում հանդիպում է Ե>Ի հնչյունափոխություն (հմմտ. Թեկուզ վերոհիշյալ KURAbune> Հաւեուեի գուգահեռը), որը կարող էր տեղի ունենալ նաև տվյալ դեպքում։ Վերևում մի քանի անգամ նշվեց, որ սեպագիր Ա-ով տրվել է նաև օ հնչյունը, որը հայերենում կարող էր հանդես դալ օ>ա անցումով, իսկ վերջին կիսաձայն Ե-ն կարող էր ընկնել։ Հետևաբար, KURErebune (*Erebone հնչմամբ)>Երեւան, որի վերջավորությունը՝ -bone (իմա՝ -bon) և Թրակիական βογ- «հյուղակ» բառը¹⁶², որով բազմաթիվ տեղանուններ են հայտնի¹⁶³, հավանաբար, ունեն Թե՝ միևնույն ծագումը, Թե՝ միևնույն իմաստը։ Դա, իհարկե, առաջին հայացքից կարող է զարմանալի թվալ, բայց եթե նկատի ունենանք, որ Արգիշթե I-ը երբ մ. թ. ա. 782 թ. ներկայիս Արին բերդի տեղում ամրոց հիմնեց, ապա այն բնակեցրեց Եփրատի և Արածանի գետախառնուրդի խիստ հնդեվրոպաբնակ շրջանից տեղափոխած 6.600 զինվորներով¹⁶⁴, որոնք ոչ թե առանց ընտանիքների գերիներ էին, ինչպես կարծում է Գ. Մելիքիշվիլին¹⁶⁵, այլ ընտանիքներով, որոնք և բնակեցվեցին նորակառույց քաղաքում, ինչպես ենթադրում է Ի. Դյակոնովը¹⁶⁶։ Հիշյալ զինվորները և նրանց ընտանիքների անդամները, հավանաբար, այն 29.284 անձինք էին, որոնց և Արգիշթե I-ը տեղահանել էր նախորդ՝ մ. թ. ա. 783 թ. հենց հիշյալ՝ Եփրատի և Արածանի գետախառնուրդի շրջանից¹⁶⁷։

Հետևաբար, Արին բերդի ուրարտական շրջանի քաղաք-ամրոցը հենց սկզբից ևեթ ուներ մոտ 30.000 հնդեվրոպացի բնակիչ։ Այս իսկ պատճառով էլ բոլորովին զարմանալի չէ, թե ինչու մշտապես ուրարտական դիցաբանի գերագույն աստված Խալդեին նվիրաբերվող տաճարը (սուսեն) այստեղ անակնկալ կերպով նվիրաբերվում է Իվարշային¹⁶⁸, այսինքն՝ լուվիական դիցաբանի աստվածներից մեկին, այն է՝ վերաբնակեցված ցեղային միավորման գլխավոր աստծուն։

Եթե նկատի ունենանք, որ ուրարտական նվաճումների ժամանակ Արատյան դաշտում կարող էր լինել հազիվ 10.000 բնակիչ (հնդեվրոպալեզու կամ ոչ-հնդեվրոպալեզու, որի մասին մենք դեռևս լրիվ պատկերացում չու-

¹⁵⁹ УКН, № 138, տող 4, HChI, № 91A, I).

¹⁶⁰ УКН, № 145, տող 3, № 146, տող 1, 2, № 147, տող 1, 2, № 147a, տող 1, 2, № 147b, տող 1, № 388, տող 4, № 389, տող 4, № 405, տող 1, № 409, տող 2.

¹⁶¹ Մ. Ա. Իսրայելյան, Երկու ուրարտական նոր արձանագրություն (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8, էջ 97, ծան. 2) և այլ աշխատանքներում։

¹⁶² В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 119.

¹⁶³ ЛУЦГА, էջ 83.

¹⁶⁴ УКН, № 127, II, տող 36—37, № 128, A2, տող 31—22.

¹⁶⁵ НУ, էջ 347, ինչպես նաև հետագա այլ աշխատանքներում։

¹⁶⁶ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 158.

²³³ և նախորդ այլ աշխատանքներում։

¹⁶⁷ УКН, № 127, II, տող 15—21.

¹⁶⁸ УКН, № 396—397.

նենք), ապա պարզ կդառնա, թե Արին բերդի հնդեվրոպալեզու բնակչությունը ինչքան մեծ նշանակություն կարող է ունեցած լինել հայ ժողովրդի կազմավորման Արարատյան հատվածում:

2. *Qatzuane (Կաղզուան): Արգիշթե I-ի Խորխոռյան տարեգրության կրկնօրինակում հիշատակվում է URUZuane բնակավայրը՝ ¹⁶⁹Tejauehe երկրի արքայական քաղաքը¹⁶⁹, որի գրության տարբերակներից մեկը հանդիպում է Մինուայի մոտ՝ նրա ժայռափոր արձանագրության մեջ, գտնված հետագայի Կարինից Կարս տանող ճանապարհի մոտակայքում¹⁷⁰: Նրա տեղադրությունը ավելի է ճշտվում Մինուայի մեկ այլ արձանագրության հայտնաբերման վայրով, որն է նույն Կարինից Կարս տանող ճանապարհի կեսին գտնվող Զիվին գյուղը¹⁷¹: Ելնելով ուրարտա-հայկական հնչյունական օրենքներից, կարելի է ասել, որ հիշյալ URUZuane քաղաքի անունը թերևս պահպանված է հենց հիշյալ Զիվին գյուղի անվան մեջ: Այսպես, ուրարտերենի սեպագիր u-ն բաց վանկի դեպքում հայերենում երբեմն կարող է վերածվել իւ կապակցության: Օրինակ, ուրարտ. suse (ստաճար) > հայ. սիւս (սապարանք)¹⁷², Վերևում նշվեց նաև, որ ուրարտերենի a-ն վերջին վանկում (վերջին կիսաձայն e-ն չհաշվելու դեպքում, որը սովորաբար միշտ ընկնում է), բաց թե փակ վիճակում վերածվում է է-ի, իսկ ապա նաև ի-ի՝ a > է > ի անցումով, որը տվյալ դեպքում առաջ կբերեր URUZuane > *Ջուէն > Ջուին (որ վկայված է)¹⁷³ > *Ջիւին > Ջիւին գուգահեռները: Հետևաբար, URUZuane քաղաքը գտնվել է Արաքսի վերին հոսանքների մոտակայքում, որը կարող է ելակետ հանդիսանալ մեր հաջորդ ենթադրության համար:

Վերևում IQatarza > Կաղարշf (Կղարշf) գուգահեռի մասին խոսելիս նկատեցինք, որ տվյալ անվան թե՛ սկիզբը, և թե՛ վերջը հնդեվրոպական բնույթ ունի, որ qat բառը առանձին վերցրած կարող է նշանակել «ներքին», «ստորին»: Ուստի URUZuane քաղաքից ներքև՝ Արաքսի հոսանքով դեպի ցած, այն է՝ դեպի արևելք ընկած որևէ բնակավայր կարող էր կոչվել *Qatzuane, իհարկե, եթե Արաքսի վերին հոսանքների շրջանը, այն է՝ Մասիսից արևմուտք, բնակեցված լիներ հնդեվրոպացիներով: Այս ենթադրությունը կարելի է հաստատել սեպագիր աղբյուրներում չվկայված *Qatzuane քաղաքի իրական գոյությամբ, որը վերոհիշյալ t > l > ղ հնչյունափոխությամբ և վերջին կիսաձայն e-ի սովորական անկումով կտար *Qatzuane > *Կաղզուան > Կաղզուան, որը հայկական և այլալեզու աղբյուրներում վկայված է որպես ամրոց և գյուղ¹⁷⁴, բերդ և ավան¹⁷⁵, գյուղաքաղաք¹⁷⁶ և քաղաք¹⁷⁷, բերդ և

¹⁶⁹ CICH, XXVI (հմտ.՝ YKH, № 128, B1, տող 3-4, HChI, № 82, Rs, I):

¹⁷⁰ YKH, № 36, տող 11:

¹⁷¹ YKH, № 37:

¹⁷² Հ. Հ. Կարապետյան, «Սիւս»-ի մեկնաբանության շուրջը (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 9, էջ 106):

¹⁷³ Ղ. Մ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 35-36:

¹⁷⁴ «Յոճահաննու կաթողիկոսի Դրասխանակերտից ելող Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 227:

¹⁷⁵ «Ստեփանոսի Տարօնեցու Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 110:

¹⁷⁶ Ստեփաննոս Օրբելյան, էջ 391:

¹⁷⁷ Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, Երևան, 1936, էջ 7:

քաղաք¹⁷⁸, որ այժմ էլ գոյություն ունի և գտնվում է Կարսից ուղիղ հարավ, իսկ Անիից՝ հարավ-արևմուտք, Արաքսի աջ (հարավային) ափին:

Եթե ճիշտ են մեր դիտողությունները, ապա *Qatzuane > Կաղզուան գուգահեռը, այսպիսով, հնարավորություն է տալիս նաև որոշակի եզրակացություններ անելու ուրարտական գերիշխանության ժամանակ հիշյալ տարածքի, այն է՝ Արաքսի վերին հոսանքների շրջանը, հնդեվրոպարենակ լինելու մասին:

VII. Քաղաքանունից՝ գյուղանուն — 1. URUAmigu (Ամոջ): Հիշատակվում է Արգիշթե I-ի խորխոռյան տարեգրության մեջ¹⁷⁹, վերևում նշվեց, որ ուրարտա-հայկական անցումներում գոյություն ունի ինչպես i > n, այնպես էլ i < n հնչյունափոխություն, որը կարող էր հանդիպել նաև տվյալ դեպքում: Բառավերջի u-ն կարող է երբեմն ընկնել, ինչպես տեսանք վերևում KURŠuluqu > Մոլի անցման կապակցությամբ: Կարելի է կարծել, որ ուրարտա-հայկական անցումներում, իրոք, եղել է նաև ց > ջ հնչյունափոխություն, որը վկայված է ուրարտ. ulgu- (<ulguše «կյանք»¹⁸⁰, մեր կարծիքով՝ «ողջություն») > հայ. ողջ (ըստ Գ. Ղափանցյանի)¹⁸¹, ուրարտ. egu- (վկայված է a-lu-še ha-lu-le e-gu-de GÜB-de a-tū-le-l-e կապակցության մեջ, որը նշանակում է «ով խալե-ն գեպի-աջ (և) դեպի-ձախ ուտի»)¹⁸² > հայ. աջ, սեռ. աջոյ (մեր ստուգաբանությամբ):

Հետևաբար, URUAmigu > Ամոջ անցումը լեզվական տեսակետից կարելի է հիմնավորված համարել: Եվ եթե նկատի ունենանք նաև այն, որ URUAmigu քաղաքը KURUṭeruše երկրի (հետագայի Գուգարքի) արքայական քաղաքն է¹⁸³, ինչպես նաև այն, որ հենց Գուգարքի տարածքում, ներկայիս Օձուն գյուղից ընդամենը 2 կմ հեռավորության վրա գոյություն ունի Ասոջ գյուղը¹⁸⁴, ապա կարելի է ասել, որ URUAmigu > Ամոջ անցումը միանգամայն օրինալի է և հիմնավորապես ապացուցված:

2. URUErdua (Արդվի): Հիշատակվում է Արգիշթե I-ի խորխոռյան տարեգրության մեջ¹⁸⁵, Այն հանդիսացել է KURUburda երկրի արքայական քաղաքը¹⁸⁶, վերևում տեսանք, որ KURUburda երկիրը տարածվել է Դերեդի ձախակողմյան (արևմտյան) վտակ Ձորագետի ստորին և միջին հոսանքների շրջանում: Հետևաբար, տվյալ երկրի URUErdua արքայական քաղաքը, բնականաբար, գտնվելու էր տվյալ շրջանում: Հիշյալ քաղաքանունը հայերենում կարող էր հանդես գալ որոշակի օրինալի փոփոխությամբ, այն է՝ e > ա և բառավերջի a > է > ի հնչյունափոխություններով, որոնց մասին խոսք եղավ վերևում: Ուստի, URUErdua > *Արդուէ > Արդուի (գյուղ Օձունից հա-

¹⁷⁸ «Արաքսի աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Բ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 96:

¹⁷⁹ MLV, VI (հմմտ. YKH, № 127, V, տող 54, HChI, № 80, § 12, VIII):

¹⁸⁰ YKH, էջ 411:

¹⁸¹ ՈւՊ, էջ 39, 220:

¹⁸² CICH, LVII, LXIII (հմմտ. YKH, № 96, տող 3, HChI, № 76, III): Հատվածի թարգմանությունը մերն է:

¹⁸³ YKH, № 127, V, տող 54—55:

¹⁸⁴ «Հայկական ՍՍՀ վարչա-տնտեսական բաժանումը», էջ 47:

¹⁸⁵ MLV, III (հմմտ. YKH, № 127, II, տող 42, HChI, № 80, § 4, VI):

¹⁸⁶ YKH, № 127, II, տող 40—42:

րավ-արևմուտք)¹⁸⁷ > Արգվի (որ այժմ էլ գոյություն ունի)¹⁸⁸ անցումը կարելի է համարել միանգամայն համոզիչ¹⁸⁹:

3. URUErɣia (Երգեվանգ): Հիշատակվում է Սարգուրե II-ի կողմից Ուրարտուի հյուսիսային շրջանների բնակավայրերի ընդհանրական թվարկման ժամանակ¹⁹⁰:

Վերևում տեսանք: որ ուրարտա-հայկական անցումներում գոյություն ունի ք > գ և բառավերջի ia > ի հնչյունափոխություն: Հետևաբար, տվյալ տեղանունը հայերենում կարող էր հանդես գալ URUErɣia > *Երգի անցումով: Եթե այս ձևի վրա ավելացնենք հայերենի առանձին բառը, որի վրա հետագայում կարող էր ավելացվել նաև -ֆ հոգնակիության ցուցիչը, ապա կստանանք *Երգի + առան + ֆ, որտեղ ի + ա կապակցությունը, բնականաբար, պետք է տար Ե, այսինքն՝ իա > Ե, որը նույնպես հատուկ է հայերենին (հմտ. գա-րի + ա + ջուր > գարեջուր, բարի + ա + կամ > բարեկամ, փռչի + ա + թաթախ > փռչեթաթախ և այլն): Ուստի URUErɣia > *Երգի + առան + ֆ > *Երգեվանգ > Երգեվանգ (ժողովրդական ստուգաբանության հիման վրա, տեղանվան վերջավորությունը շփոթելով վանգ բառի հետ): Հետևաբար, հայ մատենագրության մեջ հիշատակվող Երգեվանգ բերդը¹⁹¹, որը գտնվում էր Ուտիքի Տավուշ գավառում, Խորանաշատ վանքի դիմաց¹⁹², անշուշտ ծագում է վերոհիշյալ ուրարտական քաղաքանունից:

Եթե ճիշտ են մեր դիտողությունները, ապա կարելի է եզրակացնել, որ Սարգուրե II-ի ժամանակ ուրարտացիները եթե Սևանա լճի արևելյան կողմում հասել էին մինչև Արցախի սահմանները, ապա նույն լճի հյուսիսային ուղղությամբ հասել և մտել էին հետագայի Ուտիքի սահմանները՝ Տավուշ գավառը:

4. U RUUrkia (Արբեվան): Հիշատակվում է Ուրարտուի վերջին շրջանի կավե սալիկներից մեկում, որ հայտնաբերվել է Կարմիր բլուրի պեղումների ժամանակ¹⁹³:

Արձանագրության մեջ վկայված է հետևյալը. N[GMES nu-n[a]-a-le pa-æ-e; GĒNAr-ti-ne-e du-de-jè-e-de¹⁹⁴, որը նշանակում է. (Այս) բաները (= առարկաները) եկան մինչև Արտին լեռը (?)»: Սա արդեն ցույց է տալիս, որ Արագածի հարավ-արևմտյան լանջին գտնվող Արտին լեռը¹⁹⁵ հասած առարկաները շարունակելու են իրենց ճանապարհը մինչև Կարմիր բլուրի ուրարտական ամրոցը: Բնականաբար, Արտին—Թելեքաինն ուղեգրի մատնանշում է առարկաների ելակետի մոտավոր ուղղությունը, այն է՝ հետագայի Կումայրի, որտեղ նրանք կարող էին ժամանել ավելի հեռվից՝ հետագայի Գուգարքի Զավախք, Կղարջք կամ Տաշիր գավառներից:

187 Ղ. Մ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 63 (№ 124):

188 «Հայկական ՍՍՀ վարչա-տեղեկագրի բաժանումը», էջ 47:

189 ЛУИГА, էջ 70:

190 MLV, XII, AՅԲ, XIV, CICH, XXXII (հմտ. ՄԿԽ, № 155, A, տող 15, HChI, № 103, § 16, VII):

191 Կիրակոս Գանձակեցի, էջ 153, 163, 243, 244, 326, 346 և այլ պատմիչների մոտ:

192 Նույն տեղում, էջ 244, 326, 346:

193 УПД, № 7, лс, տող 4, ՄԿԽ, № 462, лс, տող 4:

194 УПД, № 7, лс, տող 10—11 (որտեղ GĒN=KUR, ti=te, ne=ni, de=di):

195 ՀՀԱ, էջ 41:

Հիշյալ ուրարտական տեղանվան լեզվական քննությունը թերևս կարող է կռվան հանդիսանալ վերոհիշյալ ենթադրության համար: Այսպես, վերևում բազմիցս նշվեց, որ ուրարտերենում սեպագիր U-ու արտահայտվել է նաև o հնչյունը, որը հայերենում կարող էր ենթարկվել $\text{o} > \text{ա}$ հնչյունափոխության, իսկ -ia վերջավորությունը հանդես գալ որպես -ի , այսինքն՝ URUUrka (*Orkla հնչմամբ) > *Արփի: Այս տեղանվան վրա եթե գտնարենք հայերենի աւան բառը, ինչպես URUErka > Երգեվաճ գոգահեռի դեպքում, ապա կստանանք *Արփի + աւան > *Արփեւան: Բնականաբար, այս տեղանունը ևս ժողովրդական ստուգաբանությամբ կարող էր դառնալ *Արփեւան, ինչպես այդ նկատվեց վերոհիշյալ *Երգեւաճ > Երգեվաճ տեղանվան քննության ժամանակ: Նկատի ունենալով հիշյալ բնականավոր մոտավոր տեղագրությունը հետագայի Գուգարքի սահմաններում, URUUrka (*Orkla հնչմամբ) > *Արփի + աւան > *Արփեւան > *Արփեւան լեզվական հնարավոր անցումները, մանավանդ Արքեւան գյուղի գոյությունը հետագայի Գուգարքի տարածքում¹⁹⁶ (որի կոնկրետ տեղագրությունը մեզ համար դեռևս անհայտ է), կարելի է ենթադրել, որ ուրարտական աղբյուրների URUUrka բնականավոր հետագայի Արքեւան գյուղն է Գուգարքում:

VIII. Քաղաքանունից՝ լեւեռն—1. URUHaldereulhe (Ջլդր): Հիշատակված է Մինուայի՝ Կարիի շրջանում գտնված արձանագրության մեջ $\text{URUH}a\text{-al-de-re-ul-he}$ ձևով¹⁹⁷: Քանի որ միևնույն արձանագրության մեջ հանդիպում է նաև $\text{Ba-al-du-ú-ul-he-e}$ ցեղանունը¹⁹⁸, ապա կարելի է եզրակացնել, որ երկու դեպքում էլ՝ տեղանունն ու ցեղանունը եզրափակվում են -ulhe վերջավորությամբ և որոնց հիմքերն են $\text{Ba}l\text{du}$ և URUHaldere հատուկ անունները:

Գ. Մելիքիշվիլին ենթադրում է, որ սույն URUHaldere քաղաքի անունը հետագայում պահպանվել է Ջլդր լճի անվան մեջ¹⁹⁹, Այս տեսակետը կարելի է հավանական համարել ոչ միայն նրա համար, որ ուրարտական աղբյուրների հիշյալ քաղաքը գտնվում էր Ջլդր լճի մոտակայքում, այլ նաև նրա համար, որ $\text{URUHaldere} > \text{Ջլդր}$ անցումը կարելի է հաստատել հնչյունական որոշակի օրենքներով:

Հայտնի է, որ ինչպես հայերենի բառապաշարում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի տեղանուններում իւ > չ անցում չկա: Հետևաբար, $\text{URUHaldere} > \text{Ջլդր}$ անցումը պայմանավորված է որոշակի այլ գործոններով, որոնց գոյությունն առաջին հայացքից կարող է աննկատ մնալ և իւ > չ անցումը ժխտող պատրանք ստեղծել: Այնուամենայնիվ, անցումը ճիշտ է, որը հաստատվում է հետևյալ պատճառաբանություններով:

Այսպես, օրինակ, այն բոլոր արեւելյան տեղանունները, որոնք պարունակում են ի հնչյունը և նրանց փոխանցումը կատարված է առանց միջնորդության, ապա դրանք հայերենում հանդես են գալիս միայն իւ հնչյունի առկայությամբ, սակայն, արեւմտյան լեզուներից կատարված փոխառություններում և տեղանուններում միևնույն պայմաններում նկատվում է ի > ք անցում

¹⁹⁶ Ս. է. Կրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, I, Վենետիկ, 1902, էջ 330:

¹⁹⁷ MLV, XLII (հմտ. ՄԿԽ, № 36, տող 26, HChI, № 23, V):

¹⁹⁸ MLV, XLII (հմտ. ՄԿԽ, № 36, տող 26, HChI, № 23, V):

¹⁹⁹ ՄԿԽ, էջ 428:

և հատկապես այն դեպքում, եթե փոխանցումը կատարված է հունարենի միջոցով: Օրինակ, խեթերի ինքնանվանումը, որը հրեերենի միջոցով անցել է հունարեն Աստվածաշնչին որպես $\chi\epsilon\tau\alpha\iota\omicron\iota$ ²⁰⁰, հայերենում հայտնի է որպես Քեաացիք²⁰¹, իսկ խուրհների ինքնանվանումը, որ նույն ճանապարհով անցել է հունարենին որպես $\chi\omicron\rho\rho\alpha\iota\omicron\iota$ ²⁰², հայերենում հանդես է գալիս որպես Քոռացիք²⁰³: Հետևաբար, ներկայիս Կարսից հյուսիս ընկած տարածության վրա ուրարտական շրջանում թերևս բնակվել է հունատիպ լեզվով խոսող մի ժողովուրդ, որի պատճառով, ըստ երևույթին, հետագայում տեղի է ունեցել այդ անհայտ լեզվից հայերենին փոխանցված URUḪaldere > *Քալդր նախնական անցում:

Եթե նկատի ունենանք, որ ուրարտա-հայկական անցումներում հանդիպում է ինչպես $\sigma > \chi$ հնչյունափոխության՝ ուրարտ. ulgu- (ulguše «ողջություն») > հայ. ողջ, ուրարտ. egu- (egude «դեպի-աջ») > հայ. աջ, ուրարտ. URUAmlguš > հայ. Ամոջ, ինչպես նշվեց վերևում, այնպես էլ $q > ǵ$ հնչյունափոխություն՝ ուրարտ. KURArquqe > հայ. Արկիճի, որը նույնպես նշվեց վերևում, ապա, բնականաբար, մնում է ենթադրել, որ եղել է նաև $k > \chi$ հնչյունափոխություն (հմմտ. չուս բառի մեջ կատարված նման անցումը և այլն), որի հետևանքով առաջացել է URUḪaldere > *Քալդր > Ջալդր անցումը:

IX. Քաղաքաբնակից՝ գեաանուն — 1. URUAḫuriane (Ախուրեան): Հիշատակվում է Արգիշթե I-ի՝ Սարիկամիշում գտնված արձանագրության մեջ²⁰⁴, նկատի ունենալով Ախուրյան գետի անունը²⁰⁵, որը հնում կրում էր Սարիկամիշ—Կարս—Անի—Երվանդաշատ աղեղը գծող և Արաքսին միացող գետը, Մ. Նիկոլսկին անցկացնում է URUAḫuriane > Ախուրեան զուգահեռը²⁰⁶, Այսպիսի անցումը միանգամայն օրինալափ է, քանի որ այն ապացուցվում է բառամիջի ia > եա հնչյունափոխությամբ, որ հատուկ է ինչպես ուրարտերենից հայերենին փոխանցված տեղանուններին, այնպես էլ հայերենի բառապաշարին, որը ապացուցված է բավարար չափով²⁰⁷:

2. URUAlištu (Աղստե): Հիշատակվում է Արգիշթե I-ի հորիստյան տարեգրության մեջ²⁰⁸ և նրա կրկնօրինակում²⁰⁹, որը, հավանաբար, գտնվել է ներկայիս Աղստեի հովտում²¹⁰, Ելնելով հայկական աղբյուրների Աղստե քաղաքի անունից²¹¹, որով կոչվում էր նաև նրա շրջակա գավառը²¹², ինչպես նաև

²⁰⁰ Gen., XV, 20 և բազմաթիվ այլ տեղերում:

²⁰¹ Մենդոց, ԺԵ, 20 և այլուր բազմաթիվ անգամ:

²⁰² Gen., XIV, 6 և այլուր:

²⁰³ Մենդոց, ԺԴ, 6 և այլուր:

²⁰⁴ KH3, XVIII (հմմա. YKH, № 130, տող 2, HChI, № 89, IV):

²⁰⁵ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ի, էջ 165, 166, 171, 175 և այլ պատմիչների մոտ:

²⁰⁶ KH3, էջ 92:

²⁰⁷ ЛУЦГА, էջ 72:

²⁰⁸ MLV, III (հմմա. YKH, № 127, II, տող 31, HChI, № 80, § 4, III):

²⁰⁹ ClCh, XXVII (հմմա. YKH, № 128, A2, տող 12, HChI, № 81, § 4, III):

²¹⁰ Է. Վ. Խ ա ն դ ա ղ յ ա ն, Կ. Հ. Մ կ ր տ չ յ ա ն, Է. Ս. Պ ա ր ս ա մ յ ա ն, Մեծամոր, Երևան, 1973, էջ 57—58:

²¹¹ Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե լ յ ա ն, էջ 397:

²¹² Ս տ ե փ ա ն ո ս Տ ա ր ո ն ե Յ ի Ա ս ո ղ ի Կ, էջ 280:

Աղստե գետը²¹³, կարելի է անցկացնել URUAlıştu > Աղստե (?) ղուգահեռը, ինչպես որ այդ անում է Մ. Իսրայելյանը²¹⁴, Անցումը միանգամայն օրինաշատ է, քանի որ ուրարտերենի բառավերջի u-ն հայերենում հաճախ հանգես է դալիս որպես եւ, որը եթե մի դեպքում աստիճանական անցմամբ աալիս է է (Հայկական լեոնաշխարհի հարավ-արեւմտյան կեսում), ապա մի այլ դեպքում՝ եւ (Հայկական լեոնաշխարհի հյուսիս-արեւելյան կեսում), որը ապացուցված է բավարար չափով²¹⁵, Հետևաբար, ստանում ենք URUAlıştu > *Ալիստեյ > *Աղիստեյ > *Աղստեյ > Աղստե ղուգահեռը, որը վկայում է Արգիշթե I-ի ժամանակ ուրարտացիների մուտքը Աղստեի հովիտ, այն է՝ Կուր գետի աջ (հարավային) ափերը:

Այս և նման փաստերը մեզ բերում են այն համոզման, որ աննախնի թագ կերպով հղորացող Ուրարտուն աստիճանաբար կոփում էր այն ղորեղ պատվանդանը, որի վրտ ու ուշ ապագայում բարձրանալու էր Մեծ Հայքի ոչ պակաս ղորեղ պետութունը՝ հենված Հայկական լեոնաշխարհի ամրոց ժողովրդի քաղաքացան, տնտեսական, գաղափարական և լեզվական րացարձակ միասնականության վրա:

УРАРТСКИЕ ТОПОНИМЫ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

ОВАНЕС КАРАГЕЗЯН

Резюме

Шесть крупных областей Великой Армении из числа пятнадцати — Айрарат, Тайк, Гугарк, Утик, Арцах и Сюник, которые в свое время находились в составе древневосточного государства Урарту, в 1801—1878 гг., в основном после русско-персидской (1826—1828 гг.) и русско-турецкой (1877—1878 гг.) войн, вошли в состав Российской империи, приобретая новое название — Российская или Восточная Армения.

Часть топонимов Восточной Армении, в свое время зафиксированная в урартских наскальных надписях и пространных летописях, дошла до нас как в письменной, так и в устной передаче, в рамках урарто-армянских звуковых закономерностей.

Так, из числа урартских «стран» до нас дошли названия провинций: Teḷaṇehe > Тайк (Տաւք), KURUrtehe > Арцах (Արցախ), I Uḷteruhe > Гугарк (Գուգարք); названия гаваров: I Abellanehe > Абелеанк (Արեղեանք), KURAbupe > Авнуник (Հանուհիք), I Qatarza > Кларджк (Կղարջք), KURŞuluqu > Цлук (Շղուկ), KURTerla > Три (Տրի), KURUelekupē > Гелакуни (Գեղաքունի), KURZabaḥa > Джавахк (Ճաւախք); названия городов: KURGiarnia > Гарни (Գառնի), KURGurla > Горис (Գորիս); названия поселений: Qulila > Кулиджан (Կուլիջան), KURUburda > Обардзи (Նորարձի); назва-

²¹³ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էշ 223, Հ ո վ հ ա ն ն ե ս Դ Ր ա ս խ ա ն ա կ ե ր տ-ց ի, էշ 244 և այլ պատմիչների մոտ:

²¹⁴ Մ. Ա. Ի ս Ր ա յ ե լ յ ա ն, էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էշ 189:

²¹⁵ ЛУЦГА, էշ 78—81:

ния рек: ¹Arquce>Аркичи (*Արկիճի*), ¹Erlahe>Ерасх (*Երասխ*), KURQu-
rlape>Каранку (*Կարանկու*):

Из числа урартских «городов» до нас дошли названия городов: URUErebipe>Ереван (*Երեւան*), *Qatzuane>Калзуан (*Կաղզուան*); названия поселений: URUAmigu>Амодж (*Ամոջ*), URUErdua>Ардви (*Ար-
վի*), URUEgula>Ергеванк (*Երգեւանք*), URUUrklā>Аркеван (*Արքեւան*);
название озера: URUHaldereulhe>Члдр (*Չլդր*); названия рек: URUAhu-
rlape>Ахурян (*Ախուրիան*), URUAlištu>Агстев (*Աղստև*).

Изучение топонимики как Восточной Армении, так и всего Армян-
ского нагорья проливает свет не только на изучение вопросов политиче-
ской истории и исторической географии Урарту и Армении, но и на
изучение вопросов этнической географии данного региона, расширяя
тем самым наши знания в изучении проблемы этногенеза армянского на-
рода.